№ 175 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19 — 1900 — ԵՐԵՔՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19 № 175

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր պարտականութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ուսուցչական հարցի շուրջը. Օպերային ներկայացումները. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Միջազգային կոնգրէսներ Պարիզում. Արտաքին լուրեր. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կղերական արդարադատութիւն։

ՆՈՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

—

Մեր քաղաքային ինքնավարութիւնների վրա շուտով կաւելանայ մի նոր, թէև ծանրը, բայց անխուսափելի պարտականութիւն։ Նրանց կը յանձնվի քաղաքի սահմաններում եղած գործարանների բժշկական վերահսկողութիւնը։ Քաղաքային ինքնավարութիւնները պէտք է կազմակերպեն գործարանական բանւորների բժշկական օգնութեան գործը, բանալով հիւանդանոցներ և բաց թողնելով ձրի դեղեր, իսկ մի քանի դէպքերում բժշկելով բանւորների ընտանիքի անդամներին նրանց բնակարաններում։

Գործարանատէրերը պարտաւոր են վճարել այդ նպատակով որոշ տուրք, որ կը սահմանվի քաղաքային ինքնավարութիւնների կողմից և կը վաւերացվի գործարանական տեսչութեան կողմից։ Բանւորները իրաւունք կունենան օգտվելու բժշկական կազմակերպութիւնից բոլոր այն ժամանակամիջոցում, քանի որ նրանք գործարանի մէջն են և կապված են նրա հետ պայմանագրով։

Բժշկական այս օգնութեան խնդիրը մշակվում էր պաշտօնական մի յանձնաժողովի մէջ, որ գործում էր Ֆինանսների մինիստրի օգնական Վ. Կօվալեվսկու նախագահութեամբ։ Յանձնաժողովի պարապմունքները տուին բաւարար հետևանքներ և մշակվեց մի ծրագիր, որ շուտով պէտք է ստանայ օրէնդրական ձևակերպութիւն։

Ներկայ ծրագիրը մեծ նշանակութիւն ունի քաղաքային ինքնավարութիւնների արդիւնաւէտ գործունէութեան համար բժշկական օգնութեան գործի ասպարէզում։ Քաղաքները առանց այն էլ պարտաւոր են հոգալ ազգաբնակութեան առողջապահութեան մասին և խնամել չքաւոր և անապահով դասակարգի հիւանդներին։ Այժմ նրանք, ներկայ ծրագրով, հնարաւորութիւն են ստանում գործարանատէրերի աջակցութեամբ բանալ հիւանդանոցներ և այդպիսով քաղաքի կարօտ ազգաբնակութեան մի նշանաւոր մասը ապահովել բժշկական օգնութեան կողմից։

Այն պարտականութիւնը, որ դրվում է քաղաքային ինքնավարութիւնների վրա, պէտք է նոյնպէս ծանրանայ և զեմստվոների վրա՝ գաւառներում եղած գործարանների վերաբերութեամբ։ Մեր երկիրը դեռ չունի զեմստվոի ինքնավարական հաստատութիւններ, ուստի առաջին փորձերը կը սկսվեն քաղաքներում։ Շատ ցանկալի է, որ Ֆինանսների մինիստրութեան ծրագրած այս գործի բաւարար կազմակերպութեան համար մեր քաղաքները գործ դնեին լուրջ աշխատանք։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

—

Երեւանի թեմական դպրոցի հոգաբարձութեան վերջին նամակը, որ ուղղված էր մեր համալսարանաւարտ ուսուցիչներին, տխուր մտածութիւնների առիթ տուեց շատերին, որից դրդված եւ պ. Տ. Ց. բերում է մի շարք պատճառներ, թէ ինչու հեռացան նրանք մեր դպրոցներից։ Ցիրաւի, դեռ եւս կենդանի են շատերը այն գաղափարական ուսուցիչներից, որոնք վառ յոյսերով մտան ուխտած ասպարէզը իրանց կեանքի գնով գործելու, սակայն մի քանի փորձերից յետոյ վհատված՝ ստիպված եղան հեռանալ, ասպարէզը թողնելով անկոչ աֆէրիստներին, տգէտ տիրացուներին եւ վեղարաւոր լիազօրներին։ Դեռ կենդանի են նրանք եւ անթարթ աչքով, բայց ճմլված սրտով դիտում ու ականատես են լինում փայփայած գաղափարների ոտնակոխ լինելուն ու կործանմանը։

Եւ այսօր, երբ կոչ է հրատարակվում լրագիրներում ու հրաւէր կարդացվում՝ խոստանալով ռոճիկներին աւելացնել, նրանք դարձեալ հեռու կանգնած՝ սարսափում են մտնելու այն անհիւրընկալ վայրերին, որտեղից նրանք այնպէս անպատիւ կերպով քշվեցին սեւագլուխների ձեռքով։ Նրանցից որն անաստուած հռչակվեց, որը բողոքական, որը Հայաստանեայց եկեղեցու երգեցողութեան անտեղեակ, որը Յովհաննէս Մկրտչի եօթն անունը չիմացող...

Այժմ հասարակութիւնը դարձեալ հրաւիրում է իր ուսման գործին նուիրված մշակներին. եւ եթէ վերջինները 800 ռուբլիով չեն համաձայնվում գալու, նա 1000—1200 է առաջարկում։ Սակայն մի հարց, պարոններ. մի՞թէ անձնուէր ուսուցիչները ռոճիկների քանակութեան պատճառով հեռացան։—Ի հարկէ, ոչ։ Դուք ձեր սրտացաւ հոգեւորականութեան միջոցով դժոխային դրութիւն ստեղծեցիք նրանց համար, որից ստիպված նրանք հեռացան։ Ուրեմն այժմ՝ փոխանակ 200 ռուբլի ռոճիկին աւելացնելու, աւելի լաւ չի՞ լինի հարցի խորը թափանցել։

Եթէ մի համալսարանական պէտք է մտնէ դպրոց միայն նրա համար, որ մի տարի ուսուցչութիւն անէ եւ յետոյ վարդապետ-տեսչի ինտրիգների շնորհիւ թողնէ հեռանայ, կամ թէ նրա համար, որ եպիսկոպոս-առաջնորդին «դիւր չի գար այդ պարոնը»,—ո՞ր պարտաճանաչ ուսուցիչը, թէկուզ 2000 ռուբլիով, կը համաձայնվի մտնել դպրոց։

Եթէ համալսարանական կամ միջնակարգ դպրոց աւարտած անձնուէր ուսուցիչը իր փայլուն տարիները պէտք է անցկացնէ դպրոցում՝ իր կեանքը թունաւորելով եւ յետոյ մի գեղեցիկ օր, որպէս անպէտքացած, վռնդվի դպրոցից, այնուհետեւ աշխատէ մասնաւոր անհամապատասխան գործ գտնելու՝ սովամահ լինելու վտանգին չենթարկվելու համար, իսկ վախճանված ժամանակ հասարակութիւնից մուրացած կոպէկներով թաղվի,—ո՞ր, թէկուզ, գաղափարական մարդը կը մտնէ այնտեղ։

Երբ մաթեմատիկայի ու բնագիտութեան դասերը պէտք է կրճատվեն, որպէս զի մի որ եւ է կախարդ աստուածաբանի դասերի թիւը աւելանայ—գիտութեան ո՞ր նուիրված մարդը կը համաձայնվի ստանձնել պաշտօն։ Եւ, վերջապէս, երբ մի քանի տգէտ տիրացու-ուսուցիչներ կը սկսեն աշակերտների մատաղ սրտերը կեղտոտել զանազան ինտրիգներով որ եւ է ուսուցչի վարկը գցելու համար, ասեն մի գեղեցիկ առաջարկութիւն ժողովների ժամանակ կը մերժվի, իւրաքանչիւր լուսաւոր գաղափար կը ճնշվի,—ո՞վ կը համաձայնվի այդ դժոխային դրութիւնը տանել։ Միայն նա, ով եղէգնի բնաւորութիւն ունի, ով կարող է հաճոյանալ ամենքին. բայց չէ՞ որ մարդու բնաւորութեան ամենամատ կողմը հէնց այդ է, որ նրան տանում է դէպի անբարոյականութիւն... Ես ճանաչում եմ ուսուցիչներ, որոնք հինգ տարվայ ընթացքում ժողովների ժամանակ ոչ մի կարծիք չեն յայտնել։ Նրանց սովորական ձեւն էր—կամ լուռ հանդիսատես լինել եւ կամ մեծամասնութեան կողմն անցնել։ Ուսուցիչը չէ կարողանում իր կարծիքը յայտնել, որովհետեւ մտածում է, թէ մի գուցէ դիւր չը գայ տեսչին կամ նրա արբանեակներին եւ այն ժամանակ նա ստիպված պէտք է լինի թողնել իր պաշտօնը։ Սակայն, եթէ նա համոզված լինի, որ ինքը մի տեսչի կամ եպիսկոպոսի քմահաճութիւնից չէ կախված, ոչ թէ մի, այլ մի քանի տարով է հրաւիրված եւ որ հեռացնելիս պէտք է պայմանաւորված ռոճիկը ամբողջովին վճարեն, չէ՞ որ նա բոլորովին ազատ կը զգայ իրան իր գործունէութեան ժամանակ, որը մեծ նշանակութիւն ունի ընդունակ ու ազնիւ ձգտումներով մարդու համար։ Կամ թէ, եթէ նա համոզված լինի, որ մի որոշեալ ժամանակ ծառայելուց յետոյ պէտք է որոշեալ նպաստ ստանայ իր գոյութիւնը պահպանելու համար, չէ՞ որ աւելի եռանդով կը գործէ։

Մեր անձնուէր ուսուցիչները այսպիսի պայմաններ չը լինելու պատճառով են հեռացել ասպարէզից եւ ոչ թէ նրա համար, որպէս զի լրագրութեան միջոցով իրանց աճուրդի ենթարկեն, որ բոլորովին պատիւ չէ բերում ոչ մի ազնիւ գործիչի։ Իսկ եթէ նրանք անձնուէր էին, դրան ապացոյց այն դեռ եւս թարմ մի քանի գերեզմանները, որոնք թէեւ անխօս, բայց վկայում են, որ չը կարողացան ապրել չը սիրած ասպարէզում։

Պարոններ, ժամանակ է փոխելու մեր ապագայ սերունդը պատրաստողների դրութիւնը. նրանք էլ մարդիկ են, զգայուն ու վառ իդէալներով։ Տուէք ապահով, նոր ծրագրված պայմաններ, առանց վարդապետների ու նրանց ներկայացուցիչների խորհրդին դիմելու եւ ազնիւ ու անձնուէր ուսուցիչներ միշտ կը գտնվեն։ Փորձը մարդու ամենագլխաւոր դրդիչներից մէկն է. անցեալի փորձը թող խրատ լինի մեզ։ Բաւական է, որքան տուժեցինք մենք եւ մեր շատ գործերը։

Սուրէն

ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

—

Տօների պատճառով երկու օր ընդհատումից յետոյ ներկայացվեցին «Աիդա», «Ռօմէօ եւ Ջուլիէտտա» եւ «Ռուսալկա» օպերաները։ Վերդին գրել է Աիդայի դերի համար դրամատիկ-սոպրանո, իսկ Ամներիսի համար լիրիկ-կոնտրալտո, որպէս զի առաջինը աւելի զօրեղ տիպար դուրս բերէ, որպէս տաք տեմպերամենտի տէր սեւամորթ եթովպուհի Փարաւոնի աղջկայ քնքոյշ բնաւորութեան դէմ։ Այդպէս էին անցեալ տարի Ջիւլիանի եւ Պետրովա։ Բայց այս ներկայացման՝ հակառակն էր։ Աիդան աւելի սառն էր, քան թէ կատաղի, իսկ Ամներիս չափազանց փրփրալի էր կատարում իր նախանձոտ դերը, որով եւ չը կարողացաւ սրտի թախիծը արտայայտել։ Նոյնը կարելի է ասել նրանց թէ արտաքինի եւ թէ ձայների մասին։ Աստաֆիեվա—Աիդան բարակ եւ քնքոյշ կազմուածքով, իսկ Պլատոնովա—Ամներիս յաղթանդամ եւ ոչ-նուրբ արտաքինով։ Աստաֆիեվայի ձայնը մեղմ եւ երգուածքը նուրբ, իսկ Պլատոնովայի ձայնը զօրեղ, մի քիչ էլ անադուք մենակ չէք իբրեւ զրկված, երեւակայեցէք թէ ձեզ պէս 5—10 հոգի էլ նոյն եկեղեցում զրկված են ձայն տալու իրաւունքից՝ ցուցակի մէջ արձանագրված չը լինելու պատճառով։ Կանոնաւոր է ընտրութիւնը։—Ի հարկէ ոչ. քահանան կարող է մէկին ցուցակ մտցնելով, միւսին ցուցակից վռնդելով ընտրել տալ իր ցանկացած մարդկանց. դա ամենագլխաւորն է, որից յետոյ այլ եւս ոչինչ է առաջնորդական «անկանիցի ընդ պատասխանատուութեամբ» սպառնալիքը։ Մխիթարեանների համար մի եւ նոյն չէ թէ իրանց չը ցանկացած մարդիկ կընտրվեն, բայց ապա դրա փոխարէն ինչ որ պատասխանատուութեան տակ կը լինի կամայականութիւն գործած քահանան։ Ընտրութիւնների մէջ գլխաւորը այն հիմնարկութեան շահերն են, որի համար պաշտօնեաներ պիտի ընտրվեն։ Եթէ այդ շահերն ոտնակոխ են եղել կամայականութեան միջոցով կատարված ընտրութեան շնորհիւ, ինչ հետաքրքրութիւն կարող է ներկայացնել այնուհետեւ զանցառու քահանային պատժելը կամ չը պատժելը։

Սա արդարութիւն չէ։

Հազար անգամ ոչ. անարդար եւ ապօրէն է այն ընտրութիւնը, որի ժամանակ խեղդված է այդ ընտրութեան մասնակցելու իրաւունք ունեցող հոգեւորականութիւնը։ Մեզ հետաքրքրողը միայն դա է, այսինքն արդարութիւնը։ Մեզ համար փոյթ չէ, որ մեր հոգեւորականութիւնը, ամենաբարձր տեղերից սկսած, վերին աստիճանի միակողմանի կուսակցական է, որ նա չէ կարողանում իր դրութեան բարձրութեան վրա մնալ։ Ամեն բացասական բան—կիրք, վարդուրված թշնամութիւն անցաւոր է, Լեռայի ալիքների մէջ է կորչում։ Անմահը, յաւիտենականը արդարութիւնն է։

Խօսեցնենք մեր ձեռքում եղած փաստերը։

Առաջիկայ կիրակի, սեպտեմբերի 24-ին, ինչպէս յայտնի է, Թիֆլիսի եկեղեցիներում պիտի ընտրվեն պատգամաւորներ, որոնք յետոյ պիտի ընտրեն հոգաբարձուներ Ներսիսեան դպրոցի համար։ Այդ առիթով տեղական թեմական առաջնորդը հրատարակել է կանոններ, որոնցով պիտի ղեկավարվեն ընտրողները։

Ճիշդ եւ որոշ կանոններ ու հրահանգներ ամեն մի դէպքի համար—ո՞վ կարող է ասել թէ դա մի լաւ սկիզբ չէ, որ գործողութիւնների կանոնաւորութիւնն է ապահովեցնում։ Բայց թերթելով այդ կանոնները, մենք հանդիպում ենք մի շարք փաստերի, որոնք պատասխանում են վերեւում դրած մեր հարցին—որքան է յարգվում արդարութիւնը մեր կրօնական հաստատութիւնների մէջ։

Ահա ինչ է ասում «Կանոնքի» 8-րդ յօդուածը *). «Եթէ որ եւ է ծխական զրկվի ընտրութեան մասնակցութիւնից այն պատճառով, որ նրա անունը մտցրված չէ ցուցակի մէջ, խնդիրը վճռվում է ընտրութիւնից յետոյ եւ զանցառու քահանան հարկաւ պատասխանատուութեան տակ կընկնէ»։

Այստեղ խախտված է ծխականի ամենատարրական իրաւունքը։ Դուք ծխական էք, ընտրողական իրաւունք ունէք եւ գնում էք ձեր պարտքը կատարելու. բայց եկեղեցում ձեզ չեն ընդունում, ասելով թէ ձեր անունը չը կայ ցուցակի մէջ. ինչու, ինչ իրաւունքով ձեզ զրկում են ձեր ձայնից, ո՞վ է պատճառը—այդ մասին դուք հարց ու փորձ անելու իրաւունք չունէք։ Պիտի լուռ ու մունջ հեռանաք եւ եթէ յօժարութիւն, կամ բոլորովին աւելորդ ժամանակ ունենաք, կարող էք ընտրութիւններից յետոյ գնալ ուր հարկն է եւ ապացուցանել այն, ինչ ժողովուրդն ասում է «հարսանիքից յետոյ՝ դհոլ»։ Երեւակայեցէք թէ ձեզ պէս 5—10 հոգի էլ նոյն եկեղեցում զրկված են ձայն տալու իրաւունքից՝ ցուցակի մէջ արձանագրված չը լինելու պատճառով։ Կանոնաւո՞ր է ընտրութիւնը։—Ի հարկէ ոչ. քահանան կարող է մէկին ցուցակ մտցնելով, միւսին ցուցակից վռնդելով ընտրել տալ իր ցանկացած մարդկանց. դա ամենագլխաւորն է, որից յետոյ այլ եւս ոչինչ է առաջնորդական «անկանիցի ընդ պատասխանատուութեամբ» սպառնալիքը։ Մխիթարեանների համար մի եւ նոյն չէ թէ իրանց չը ցանկացած մարդիկ կընտրվեն, բայց ապա դրա փոխարէն ինչ որ պատասխանատուութեան տակ կը լինի կամայականութիւն գործած քահանան։ Ընտրութիւնների մէջ գլխաւորը այն հիմնարկութեան շահերն են, որի համար պաշտօնեաներ պիտի ընտրվեն։ Եթէ այդ շահերն ոտնակոխ են եղել կամայականութեան միջոցով կատարված ընտրութեան շնորհիւ, ինչ հետաքրքրութիւն կարող է ներկայացնել այնուհետեւ զանցառու քահանային պատժելը կամ չը պատժելը։

Սա արդարութիւն չէ։

Հազար անգամ ոչ. անարդար եւ ապօրէն է այն ընտրութիւնը, որի ժամանակ խեղդված է այդ ընտրութեան մասնակցելու իրաւունք ունեցող հոգեւորականութիւնը։

*) Կանոնները զրաբար լեզուով են գրված, երեւի շատերին անհասկանալի դարձնելու համար. մենք թարգմանեցինք։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՂԵՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԻՒՆ

I

Ամենապարզ ճշմարտութիւններից մէկն էլ այն է, որ մի հիմնարկութեան ամբողջ հեղինակութիւնը կախված է նրա մէջ տիրող օրինականութիւնից, արդարադատութիւնից։ Երբ դուք նայում էք մի հասարակական, կրօնական հաստատութեան, մի մտածէք թէ նա առողջ ու կանոնաւոր կեանք կարող է վարել միայն այն ժամանակ, երբ կունենայ նիւթական առատ միջոցներ, հովանաւորված դրութիւն եւ այլն. դուք պէտք է հետաքրքրվէք թէ ինչպէս են այն հիմնարկութեան մէջ վերաբերվում արդարութեան. եթէ հաստատված է նա, այդ արդարութիւնը, դուք խմանում էք, որ դա աւազի վրա չինած հիմնարկութիւն է, իսկ եթէ այնտեղ դիտեն ամեն ինչ մոռանալ արդարութեան համար, կը նշանակէ, որ հաստատ են նրա հիմքերը։

Այս տեսակէտից մենք մի թեթեւ ակնարկ կը գցենք մեր կրօնական հաստատութիւնների վրա եւ կը տեսնենք թէ ինչ պատի մէջ է այնտեղ արդարութիւնը։ Մեզ հետաքրքրողը միայն դա է, այսինքն արդարութիւնը։ Մեզ համար փոյթ չէ, որ մեր հոգեւորականութիւնը, ամենաբարձր տեղերից սկսած, վերին աստիճանի միակողմանի կուսակցական է, որ նա չէ կարողանում իր դրութեան բարձրութեան վրա մնալ։ Ամեն բացասական բան—կիրք, վարդուրված թշնամութիւն անցաւոր է, Լեռայի ալիքների մէջ է կորչում։ Անմահը, յաւիտենականը արդարութիւնն է։

խորժ։ Սվետլով (բարիտոն) Ամոնասրի դերը լաւ կատարեց. նրա ձայնը շատ ուժեղ եւ հնչիւն է։ Նա անհամեմատ աւելի եռանդոտ էր, քան իր դուստր Աիդան։ Բադօմէսի դերը կատարում էր Բօրիսենկո, տենոր Պիկկալուգայի հիւանդութեան պատճառով։

«Ռամէօ եւ Ջուլիէտտայի» մասին կարելի է ասել, որ նա ամեն կողմից էլ անցաւ շատ աջող։ Թատրոնը լիքն էր հասարակութեամբ։ Երկու գլխաւոր դերերը, որոնց շուրջը պտըտում էր պիէսան, կատարում էին օր. Պապաեան եւ Բօրիսենկո, հիացնելով հասարակութիւնը իրանց արիաներով եւ դուէտներով։

«Ռուսալկա», որ գրվեց կիրակի օր, ամսիս 17-ին, շատ մեծ հասարակութիւն չէր գրաւել։ Այս ներկայացմանը արական դերերն աւելի աջող էին կատարվում, քան կանացի դերերը։ Գօրեանինով (բաս) ցոյց տուեց իր փառաւոր ձայնով ջաղացպանի չնորհալի դերի գեղեցկութիւնը եւ ազդեցութիւն գործեց։ Էրնստ—տենոր իշխանի դերը երգեց մեծ ոգեւորութեամբ։ Ռուսալկա—Անդրէեվա եւ իշխանուհի—Պլատովա այնքան տպաւորիչ չէին։ Ներկայացումն անցաւ անհամեմատ սառն։ Ապօթէօսը հիանալի էր։ Կարա-Մուրզա

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կիրակի օր, ամսիս 17-ին, տեղի ունեցաւ Թիֆլիսի առեւտրական ուսումնարանի բացումը։ Դահլիճի փոքրութեան պատճառով ծնողները չէին հրաւիրված։ Բայց եւ այնպէս դրսի սրահները լիքն էին կողմնակի անձինքներով։ Ներկայ էին՝ քաղաքագլուխը, Թիֆլիսի վաճառականական հասայնքի հոգաբարձութիւնը, ուսումնարանի դիրեկտոր պ. Ֆիշէր, հայ եւ ռուս կրօնուսոյցները, ուսուցիչները, աշակերտները եւ մաղթանքի համար հրաւիրված քահանան ու էկղարիսի երգեցիկ խումբը։ Հանդէսը բաց արեց ռուս քահանան մի ճառով։ Յետոյ կատարվեց մաղթանք քառաձայն խմբի ներդաշնակ երգեցողութեամբ։ Ապա երգեցին «Շատ տարի մաղթեմք» Կայսրի, Կայսերական տան, հիմնադիր հասայնքի հոգաբարձութեան, ուսուցիչների եւ աշակերտների համար։ Ի վերջոյ, ուսումնարանի բոլոր աշակերտները երգեցին, Կարա-Մուրզայի ղեկավարութեամբ, «Տէր պահեա զԿայսր» եւ ցրվեցին։ Ուսումնարանը հիմնել է Թիֆլիսի վաճառականական հասայնքը եւ գտնվում է ֆինանսների մինիստրութեան հովանաւորութեան ներքոյ։ Աշակերտների թիւն է 545։ Ստորին պատրաստականն ունի 4 զուգընթաց դասարաններ եւ պարունակում է իր մէջ 186 աշակերտ, բարձր պատրաստականը—5 զուգընթաց 229 աշակերտներով եւ առաջին դասարանը երեք զուգընթաց՝ 130 աշակերտներով։ Ուսուցիչները 17 հոգի են։ Հայոց կրօնի եւ լեզուի համար հրաւիրված են՝ կրօնուսոյց Սահակ քահանայ Սահակեան, պ.պ. Վանցեան, Բախչինեան եւ Յարութիւն Թումանեան։ Դասերը սկսվում են այսօր, երեքշաբթի։

—

Սեպտեմբերի սկզբի ցուրտ օրերից յետոյ Թիֆլիսում եւ նրա շրջակայքում եղանակը տաքացաւ եւ ահա երկու շաբաթ է, որ պարզ եւ գեղեցիկ օրեր է անում։ Շնորհիւ ամառվայ ընթացքում եկած անձրեւների՝ արօտները կայ բաւականաչափ բուսականութիւն տնային կենդանիների համար։

—

Երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութեան մէջ ներկայումս հերթական է Պետերբուրգում գիւղատնտեսական ակադէմիա հիմնելու հարցը։ Մտադրութիւն կայ այդ հարցը քննութեան ենթարկել կամ ներկայ տարվայ վերջը կամ, գոնէ, եկող տարվայ սկզբին։

—

Մեզ խնդրում են հաղորդել, որ կոյրերին խնամող ընկերութիւնը օգոստոս ամսի ընթացքում ստացել է 5956 ռուբլի 84 կոպէկ, իսկ ծախսել է 1763 ռուբլի 25 կոպէկ։ Դրամարկղում առ 1 սեպտեմբերի գոյացել էր 9623 ռ. 16 կ.։ Օգոստոս ամսին թէ հին եւ թէ նոր հիւանդները այցելել են հիւանդանոցը 3360 անգամ, եւ տեղի է ունեցել 38 օպերացիա։

—

Արտասահմանից Թիֆլիս վերադարձաւ Թիֆլիսի ցէնզուրական կոմիտէի նախագահ գաղտնի խորհրդական Մ. Պ. Դակկէր։

—

Ներերս Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ քննվում էր այն հարցը, թէ ինչպէս պէտք է տօնել ռուսաց վարչութիւն մտցնելու 100-ամեայ յօբելեանը Թիֆլիսում։ Քաղաքային վարչութիւնը այն եզրակացութեան եկաւ, թէ Թիֆլիսը, նոյնպէս եւ ամբողջ Անդրկովկասը ռուսաց մեծ կայսրութեան հովանու տակ առնելու պատմական մեծ անցքը յաւերժացնելու համար պատշաճաւոր կը լինէր այնպիսի հիմնարկութիւններ ստեղծել, որոնք, մի կողմից, լինէին նոր, եւ կապ չունենային առաջ յարուցված նախագծերի հետ, իսկ միւս կողմից հաստատապատասխանէին քաղաքի միջոցներին։ Ուշադրութեան առնելով այդ բոլորը, քաղաքային վարչութիւնը կարծում է՝ ռուսաց վարչութեան Թիֆլիս մտցնելու հարիւրամեայ յօբելեանը յաւերժացնելու համար հիմնել ծննդարան 20 մահճակալներով՝ որոշելով դրա համար 7,200 ռ. տարեկան. բանալ չորս տարրական դպրոցներ—2 արական եւ երկու իգական, սկսած 1901 թւից մէկ դպրոց տարեկան. կառուցանել Երեւանեան հրապարակի վրա, քաղաքային տան առաջ մի շատրուան, ալէգորիական դէմքով, որ կը ներկայացնէ Ռուսաստանը՝ իր հովանաւորութեան տակ առնելիս Անդրկովկասի ազգերին՝ համապատասխան մակագրով. իսկ շատրուանի շուրջը տնկել ծաղկանոց, որոշելով այդ բոլորի համար 8000 ռուբլի. մանակցել Թիֆլիսում լինելիք գիւղատնտեսական եւ արդիւնաբերական ցուցահանդէսին՝ կազմելով այնտեղ մի բաժին, որը ցոյց կը տայ, թէ որ աստիճան զարգացման է հասել Թիֆլիս քաղաքի բարեկարգութիւնը ռուսաց հարիւրամեայ վարչութեան վերջում. հաստատել երկու թոշակ, 360 ռ. իւրաքանչիւրը, Պետերբուրգի կանանց բժշկական ինստիտուտում Թիֆլիսի իգական միջնակարգ դպրոցներում աւարտած աղջիկների համար։

—

«Новости» լրագրի մէջ կարդում ենք. «Գոյութիւն ունեցող կանոնների հիման վրա դասարանից դասարան փոխադրվելու համար քննութիւնները կատարվում են գիմնազիաների բոլոր դասարաններում։ Մի եւ նոյն ժամանակ առանց քննութեան դասարանից դասարան փոխադրվում են այն աշակերտները, որոնք տարեկան բաւարար թւանշաններ ունենալով բոլոր առարկաներից, բացի դրանից 4 թւանշան ունեն հետեւեալ չորս գլխաւոր առարկաներից երկուսից, այն է ռուսաց, լատիներէն եւ յունարէն լեզուներից ու մաթեմատիկայից։ Ինչ վերաբերում է մնացած աշակերտներին, հինգերորդ, վեցերորդ եւ եօթերորդ դասարաններում փոխադրական քննութիւններ չեն կրող տալ այն աշակերտները, որոնք երկու կամ աւելի առարկաներից տարեկան անբաւարար թւանշաններ ունեն։ Մի եւ նոյն ժամանակ, սկսած հինգերորդ դասարանից, մի դասարանում երկու տարի մնացող աշակերտը հետեւեալ դասարանում չէ կարող էլի երկու տարի մնալ եւ աշակերտը արձակվում է դպրոցից։ Իսկ բոլոր աշակերտները մինչեւ հինգերորդ դասարանը ենթարկվում են փոխադրական քննութիւններին, առանց սահմանափակումների։ Ներկայումս ժողովրդական լուսաւորութեան մինիստրը նախագծում է հետեւեալ փոփոխութիւնները մտցնել այդ կանոնների մէջ։ Մտադրութիւն կայ առանց քննութեան հետեւեալ դասարանները փոխադրել այն բոլոր աշակերտներին, որոնք տարեկան կունենան ոչ պակաս երեք թւանշանից բոլոր առարկաներից. իսկ մնացած բոլոր աշակերտներին առաջին դասարանից սկսած մինչեւ ութերորդ դասարանը մտադրութիւն կայ երկու մասի բաժանել։ Աշակերտներից նրանք, որոնք անպայման յետադէմ են, կը մնան նոյն դասարաններում մանկավարժական ժողովների որոշմամբ։ Իսկ մնացած բոլոր աշակերտներին թոյլ կը տրվի քննութիւն բռնել միայն այն առարկաներից, որոնց մէջ թոյլ են եղել տարվայ ընթացքում, բացի դրանից, վերաքննութիւն արձակուրդներից յետոյ։

—

«Berliner Tageblatt» լրագրի թղթակիցը լսել է, որ ֆինանսների մինիստր Վիտտէ իր՝ Պարիզ եղած ժամանակ բանակցութիւններ էր վարում ֆրանսիական կապիտալիստների հետ, ի նկատի ունենալով ուղղել ֆրանսիական դրամագլուխները դէպի Ռուսաստան՝ երկրի արդիւնաբերական ոյժերը բարձրացնելու նպատակով։ Ֆինանսների մինիստրը չատ կը ցանկանար, որ ֆրանսիական դրամագլուխներով սկսվէին Ռուսաստանում խոշոր ձեռնարկութիւններ, գլխաւորապէս Ուրալի հանքային անհուն հարստութիւնները մշակելու համար։ Ֆրանսիական գիտնականների պակասեցրած մաքսահարկը պէտք է հող պատրաստէ ֆինանսական նոր համաձայնութիւնների համար Ֆրանսիայի եւ Ռուսաստանի միջեւ։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ քննվում է հրէաների մշտական բնակութեան տեղերում պրոֆէսիոնալ եւ արհեստագիտական դպրոցներ բանալու հարցը։ Այդ դպրոցներում հրէաները կընդունվեն առանց սահմանափակման կանոնների ենթարկվելու։

—

Սեպտեմբերի 16-ին քաղաքային դումայի դահլիճում կայացաւ արհեստաւորների դեպուտատների ժողովը, ուր արհեստաւորների գլուխ Սերօբեանց կարդաց իր բացատրութիւնը վերաստուգող այն յանձնաժողովի հաշուի առիթով, որը քննել է արհեստաւորների վարչութեան գործողութիւնները եւ գտել էր բազմաթիւ զեղծումներ։ Պ. Սերօբեանցի բացատրութիւններից յետոյ, դեպուտատներից մէկը արհեստաւորների ժողովին իր կողմից մի յայտարարութիւն ներկայացնելով՝ առաջարկեց նիստերի արձանագրութիւնները, վերաստուգող յանձնաժողովի հաշիւը եւ արհեստաւորների գլխի պատասխանը յանձնել նահանգական վարչութեանը՝ Սերօբեանցին հեռացնելու իր պաշտօնից եւ դատի ենթարկելու նրան ապօրէն գործողութիւնների համար։

—

Այս աշնան Պետերբուրգում կը բացվի մի ուսումնարան, ուր աշակերտները տեսականապէս եւ գործնականապէս կուսումնասիրեն ալիւր աղալու գործը։ Ուսումնարանը բացվում է խոշոր ալիւրավաճառների ձեռներէցութեամբ։ Ուսման ընթացքը դպրոցում տեւելու է երկու տարի. երրորդ տարին նուիրված կը լինի առաւելապէս գործնական պարապմունքների։ Ուսումնարանում կընդունվեն միջնակարգ դպրոցից աշակերտներ, որոնց տարիքը 19-ից պակաս չի լինի։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Գաւառապետ Ի. Բօղդանովիչ նոյն պաշտօնով տեղափոխվեց Բագու։ Ամսիս 8-ին Ղուբայի կլուբի դահլիճում ճաշկերոյթ կար ի պատիւ Նրա։ Որպէս մարդ՝ ազնիւ, անկաշառ սիրտ ունէր, որպէս աստիճանաւոր՝ գործունեայ էր եւ եռանդոտ։ Նրա տեղ՝ մեր նոր գաւառապետ նշանակվեց հաշտարար միջնորդ Ֆ. Դէմինսկիյ»։

—

ԱԽՏԵՐԿԱՑԻՑ մեզ գրում են. «Մեզ հասնող լուրերից, թէ նամակներով եւ թէ լրագիրներով, իմանում ենք, որ Կովկասում անընդհատ տեղացող կարկուտը եւ անձրեւը չատ վնասներ են հասցրել բուսականութեանը, իսկ այստեղ, Խարկովի նահանգում, մինչեւ սեպտեմբերի սկիզբը մի կաթիլ անձրեւ չէ կաթել. երաշտ էր. նորերս սկսել է անձրեւ տեղալ։ Մինչդեռ Կովկասում բուսականութիւնը փտեց անձրեւից, Մալօրօսիայում երաշտը փչացրեց տարվայ ամբողջ բերքը։ Անցեալ տարի ընդհակառակն էր»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՕՆԳՐԷՍՆԵՐԸ ՊԱՐԻԶՈՒՄ

(Նամակ Պարիզից)

—

Միջազգային կօնգրէսները այնքան արագութեամբ յաջորդում են միմեանց, որ, ինչպէս ասում են, մարդ ժամանակ չէ ունենում աչք բաց անելու, կենտրօնացնելու ստացած տպաւորութիւնները եւ մի ընդհանուր գաղափար կազմելու։ Հազիւ վերջանում է մի կօնգրէս, եւ իսկոյն, երկրորդ օրը, բացվում է մի նորը, աւելի բազմամարդ եւ աւելի աղմկալից, քան առաջինը. այդ երկրորդը դեռ չը վերջացած, բացվում է միաժամանակ մի երրորդը, որ մոռացնել է տալիս նախորդ կօնգրէսները եւ գրաւում է մի, երկու, չատ չատ երեք օրվայ

նայի հետ վայելուչ յարգանքով կամ գործ դընեն բանութիւն եւ խարդախութիւն», այն ժամանակ քահանան փակում է ժողովը եւ յայտնում է առաջնորդին, որ նոր ընտրութիւն է նշանակում եւ եթէ այդ անգամն էլ ժողովականները հանդարտ ու օրինաւոր չը մնան, այն ժամանակ արդէն առաջնորդն ինքն է նշանակում «յարմարաւոր անձանց» իբրեւ ընտրեալներ։

Այս յօդուածը այնքան անորոշ ու առաձգական է, որ կարող է չատ կամայականութիւնների տեղիք տալ։ Անկասկած, ընտրողական ժողովը միանգամայն պարտաւոր է օրինաւորութեան եւ վայելչութեան սահմաններից դուրս չը գալ։ Բայց հօ չէ կարելի ասել թէ ժողովականները եւ մանաւանդ նախագահները հրեշտակներ են։ Անշուշտ, կը պատահեն թիւրիմացութիւններ, բողոքներ կը յայտնվեն այս կամ այն զեղծման դէմ։ Հիմա ո՞վ պէտք է որոշէ թէ դրանք օրինաւոր վարմունքներ են եւ ոչ թէ այնպիսի արարքներ, որոնց պատճառով նախագահողը կարող է փակել ժողովը։ Ամեն ինչ թողնված է նախագահողին. ժողովականների վրա բարդված են ամեն տեսակ պարտաւորութիւններ, իսկ նախագահող քահանայի պարտաւորութիւնների մասին—ոչ մի խօսք։ Եւ սակայն մեղք չէր լինի, եթէ ընտրող ծխականը իմանար թէ որն է նախագահողի իրաւասութեան սահմանը. ինչ բան կարող է անել նա եւ ինչ բան անելու իրաւունք չունի։

Այդ գիտակցութիւնը հարկաւոր էր մանաւանդ այն պատճառով, որ 23-րորդ յօդուածը արգելում է ընտրողին արձանագրութեան վրա որ եւ է նկատողութիւն գրել. նա միայն պիտի ստորագրէ, եթէ համաձայն էլ չը լինի արձանագրութեան մէջ եղածին. միայն ժողովը փակվելուց յետոյ դժգոհ ծխականը իրաւունք ունի առանձին թղթով ներկայացնելու իր նկատողութիւնները կամ գրաւոր բողոք տալ առաջնորդին երկու օրվայ ընթացքում։

Մեզ ճիշդ յայտնի չէ, թէ ինչ պատճառով հարկաւոր է համարվել ընտրողական արձանագրութիւնները մաքուր պահել որ եւ է նկատողութիւնից. երեւի այստեղ կայ այն նպատակը, որ պէտք է քչացնել բողոքաւորների թիւը, խլել ծխականից ամենահեշտ ձեւով, տեղն ու տեղը, իր անբաւականութիւնը յայտնելու յարմարութիւնը։ Ամեն մէկը չէ կարող ժողովից յետոյ նստել, թուղթ գրել կամ երկու օրվայ ընթացքում բողոք ներկայացնել։ Ահա այդ դժուարութիւնը չահագործելու միտքն ունի այդ կանոնը։ Եւ վերջապէս, եթէ հարկաւոր է ձեր ստորագրութիւնը, պէտք է հարկաւոր լինի եւ այն, թէ դուք ինչպէս էք վերաբերվում ժողովին։ Բայց ձեզ ասում են. ստորագրեցէք, թէեւ ժողովը անկանոն լինի ձեր կարծիքով, իսկ արձանագրութեան մէջ միանգամայն օրինաւոր համարվի. ստորագրեցէք, թէկուզ դուք համոզված էք, որ անարդարութիւններ չատ են եղել, իսկ արձանագրութեան մէջ ասված է, թէ ամեն ինչ կարգին եւ օրինաւոր էր։ Ո՞րպիսի անհեթեթութիւն նոյն իսկ լոգիկայի, առողջ դատողութեան տեսակէտից։

Իւրաքանչիւր մարդ կարող է պարզ տեսնել, թէ ինչ տենդենցիաների մէջ են չաղախված այս կանոնները։ Բայց արժէ՞ մի անցաւոր, պատահական բանի համար այսպիսի աղճատված կերպարանք տալ արդարութեան։ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը ընտրվում է չորս տարի ժամանակով. մի կարճ միջոց մարդկանց կեանքի մէջ։ Ի՞նչ օգուտ պիտի տաք ժողովրդին ձեր տենդենցիաներով։—Ոչինչ։ Բայց մի բան դուք պարտաւոր էք անել—սովորեցնել ժողովուրդը օրինականութեան, արդարութեան։ Այդ դաստիարակչական նշանակութեան տեսակէտից է, որ մենք դատապարտում ենք կղերական միակողմանիութիւնը, կուսակցական միտումները։

Արդար եղէք, որպէս զի յարատեւ լինէք։

նեցող ամեն մի անհատի ձայնը։ Այս տարրական հակացողութիւնը «Մշակը» խոշոր փաստերով ժողովրդականացրել է 1892-ի կաթողիկոսական ընտրութեան ժամանակ։ Այժմ այդ բանը մոռացված է համարվում մեր հոգեւորականների կողմից. բայց դա չէ նշանակում թէ մենք էլ պիտի լուռ մնանք։ Մենք ասում ենք. երբ ծխականը ապօրէն կերպով զրկված է իր իրաւունքից, դուք պիտի արդար լինէք. պիտի նախ վերականգնէք այդ ոտնակոխ եղած իրաւունքը, որպէս զի ընտրողական ժողովին տաք օրինականութիւն, որպէս զի ազատ ընտրողական ձայնը յարգված լինի, ապա միայն պիտի ձեռնարկէք ընտրութեան, եթէ ի հարկէ, կամենում էք ազատ, ժողովրդական ընտրութիւն եւ ոչ թէ սարքովի, տենդենցիոզ ընտրութիւն։

Որ սեպտեմբերի 24-ի ընտրութիւնների համար սահմանված է տենդենցիոզ ընտրութիւն, այդ երեւում է մանաւանդ այն հանգամանքից, որ նախագահող քահանաներին տրված են դիկտատորական իրաւունքներ։ Ամեն տեղ ընտրողական ժողովը ինքն է իր համար քարտուղար ընտրում, բայց «Կանոնքը» այդ իրաւունքը այժմ նախագահող քահանային է տալիս։ Բայի դրանից, 17-րդ յօդուածը ասում է, որ եթէ «ժողովականները խանդարեն կարգը հանելով աղմուկ, չը վարվեն նախագահ քահանայի հետ վայելուչ յարգանքով կամ գործ դընեն բանութիւն եւ խարդախութիւն», այն ժամանակ քահանան փակում է ժողովը եւ յայտնում է առաջնորդին, որ նոր ընտրութիւն է նշանակում եւ եթէ այդ անգամն էլ ժողովականները հանդարտ ու օրինաւոր չը մնան, այն ժամանակ արդէն առաջնորդն ինքն է նշանակում «յարմարաւոր անձանց» իբրեւ ընտրեալներ։

Այս յօդուածը այնքան անորոշ ու առաձգական է, որ կարող է չատ կամայականութիւնների տեղիք տալ։ Անկասկած, ընտրողական ժողովը միանգամայն պարտաւոր է օրինաւորութեան եւ վայելչութեան սահմաններից դուրս չը գալ։ Բայց հօ չէ կարելի ասել թէ ժողովականները եւ մանաւանդ նախագահները հրեշտակներ են։ Անշուշտ, կը պատահեն թիւրիմացութիւններ, բողոքներ կը յայտնվեն այս կամ այն զեղծման դէմ։ Հիմա ո՞վ պէտք է որոշէ թէ դրանք օրինաւոր վարմունքներ են եւ ոչ թէ այնպիսի արարքներ, որոնց պատճառով նախագահողը կարող է փակել ժողովը։ Ամեն ինչ թողնված է նախագահողին. ժողովականների վրա բարդված են ամեն տեսակ պարտաւորութիւններ, իսկ նախագահող քահանայի պարտաւորութիւնների մասին—ոչ մի խօսք։ Եւ սակայն մեղք չէր լինի, եթէ ընտ-

համար ամբողջ Պարիզի ուշադրութիւնը։ Համաշխարհային ցուցահանդէսի այն բաժինը, որ կոչվում է կոնգրէսների պալատ (Palais des congrès), իր բազմաթիւ ահագին եւ լայնատարած դահլիճներով հազիւ կարողանում է ամփոփել երկրագնդի զանազան անկիւններից եկած հազարաւոր կոնգրէսիստներին, որոնց ճառախօսութիւնները, առաւօտեան ժամը 9-ից սկսած մինչեւ երեկոյեան ժամը 6—7-ը, դղրդալից ծափահարութիւնների մէջ, թնդում են պալատի կամարների տակ։

Բայց դեռ դրանով չէ վերջանում գործը. հէնց որ կոնգրէսի նիստը փակվում է, կոնգրէսիստները չտապում են տուն, հագնում են ֆրակները եւ գնում են ժամանակցելու այս եւ այն բանկէտին, այս եւ այն երեկոյթին, որոնք տրվում են ի պատիւ իրանց։ Մի տեղ հրաւիրում են ցերեկոյթի, գրական-երաժշտական հանդէսի, մի այլ տեղ ժամը 5-ին «five oclock»-ի, երրորդ տեղ լեոնչի (lunch), չորրորդ տեղ՝ փունչի (punch), ընդունելութեան այս եւ այն պաշտօնական անձի, կամ նշանաւոր գիտնականի, կամ հրապարակախօսի տանը. վերջապէս հրաւիրում են պարահանդէսի կամ գեղարուեստական երեկոյթի, եւ կամ բանկէտի։ Եւ զարմանալի չէ, որ կոնգրէսները այնպիսի աղմուկ են բարձրացնում, այնպիսի մեծ ուշադրութիւն են գրաւում, որ այժմ ընդհանուր կարծիք է դարձել, թէ 1900-ի համաշխարհային ցուցահանդէսի «մեխը» (clou) պէտք է համարել կոնգրէսները, ինչպէս 1899-ի «մեխը» համարվում էր էյֆէլեան աշտարակը։

Եւ ճշմարիտ, համաշխարհային պատմութեան մէջ չէ կարելի գտնել մի օրինակ, երբ որ եւ իցէ կենտրոնում գումարված լինեն այնպիսի բազմալեզու, բազմացեղ ժողովներ, ինչպէս այժմ Պարիզում։ Նախկին տիեզերական եկեղեցական ժողովները կորցնում են իրանց նշանակութիւնը գիտութեան եւ արուեստների այս նոր տիեզերական ժողովների առաջ, ուր ֆրանսիացին, անգլիացին, ռուսը, գերմանացին, սպանիացին, իտալացին, նորվեգիացին, չինացին, եապօնացին, հրէան, յոյնը, հայը, հնդիկը, արաբը, լեհը, ֆիննը, բուլգարը, կորէացին, սիամցին, ուր կաթոլիկը, բողոքականը, օրթոդոքսը, լուսաւորչականը, մահմեդականը, մովսիականը, բուդդայականը, բրահմանականը, առանց որ եւ է ատելութեան, մոլեռանդութեան, միմեանց ձեռք են տալիս, միմեանց հետ վիճում են, մտքերի եւ կարծիքների փոխանակութիւն են կատարում, միմեանց հետ բաժակ են պարպում եւ միմեանց կենաց են կոնծում։ Դրանց ամենքին միացնում է մի մեծ, կենսական ոյժ, որ կոչվում է գիտութիւն։

Իսկապէս, բուն գիտական եւ գրական միջազգային կոնգրէսները սկսեցին կայանալ միայն օգոստոսի 16-ից։ Հետզհետէ կայացան երկրաբանական, մարդաբանական եւ նախապատմական հնագիտութեան, մատենագրական, հոգեբանական, ազգագրական, կրօնների պատմութեան կոնգրէսները, որոնք զուտ գիտական նշանակութիւն ունէին եւ որոնց մասնակցում էին եւրոպական հռչակաւոր գիտնականներ, պրոֆեսորներ եւ մատենախօսներ, ինչպէս Վիրխով, Բերտրան, Գոդրի, Իվ Գիյօ, Համի, Լէտուրնօ, Մորտիլլէ, Օպպերտ, Բիրօ, Շարլ Բիշէ, Էսպինաս, Ֆէրրարի, Սիւլլի Պրուդհոմ, Մորիս Բլոկ, Բուտմի, Մասպէրօ, Բէվիլ, Կարրիէր, Գիմէ, Լբրուա-Բոլիօ, Մաքս Միւլլէր, Սաբատիէ, Սեբիլլօ, Թայլոր, Լէօն Բուրժուա, կոմս դը-Գուբերնատիս եւ այլն։

Միայն այսօր վերջացաւ առաջին միջազգային ֆեմինիստական կոնգրէսը կամ կանանց իրաւունքների եւ վիճակի միջազգային կոնգրէսը, որ շարունակ 4 օր դղրդեցրեց ամբողջ Պարիզը։ Երէկ բացվեցին եւ դեռ շարունակվում են երկրագործական, ժողովրդական աւանդութիւնների, ժողովրդական ուսուցման կոնգրէսները, իսկ մի քանի օրից յետոյ կը զբաղվեն սոցիալիստների, ազատ մտածողների կոնգրէսները, մարդկայնութեան մեծ կոնգրէսը (grand congrés de l'Humanité), խաղաղութեան կոնգրէսը եւ սոցիալական դատաբարկութեան կոնգրէսը։ Բոլոր գիտական կոնգրէսներում, ինչպէս եւ կանանց կոնգրէսում Ռուսաստանն ունէր իր պաշտօնական եւ ոչ պաշտօնական ներկայացուցիչները։ Հայերից այդ կոնգրէսներին մասնակցում էին Մինաս Չերազ, Ա. Զօպանեան եւ տողերիս գրողը, իբրեւ անդամներ եւ պարապմունքներին մասնակցողներ։ Ազգագրական կոնգրէսում տողերիս գրողը կարդաց երկու զեկուցում (Պարսկաստանի քիւրդերի եւ Զիվանշիրի քեօլանիների մասին), որոնք, կոնգրէսի որոշմամբ, պէտք է ամբողջովին տպվեն ակտերի մէջ։ Կրօնների պատմութեան կոնգրէսում պ. Մինաս Չերազ կարդաց «Ալէքսանդր Մակեդոնացու լեգենդը հայերի մէջ» զեկուցումը. տողերիս գրողը կարդաց՝ «Բաբիական նոր կրօնի մասին» զեկուցումը, որոնք նոյնպէս պէտք է տպագրվեն կոնգրէսի ակտերում։ Ժողովրդական աւանդութիւնների կոնգրէսում՝ պ. Մինաս Չերազ կարդաց «Լեգենդների եւ հեքեաթների ծագումը եւ էվոլիւցիան» զեկուցումը, իսկ պ. Ա. Զօպանեան կարդաց «Դաւիթ եւ Մհերի լեգենդը հայերի մէջ» զեկուցումը։ Այդ կոնգրէսում պ. Չերազ ընտրվեց քարտուղար-օգնական, իսկ ժողովրդական ուսուցման կոնգրէսում, որի նախագահն է ֆրանսիական նախկին առաջին մինիստր Լէօն Բուրժուա, պատուի անդամ (membre d'honneur) ընտրվեց տողերիս գրողը։

Նիւթի առատութեան պատճառով ես կը խօսեմ միայն մի քանի կոնգրէսների եւ յարուցված ու լուծված հարցերի մասին։

Հ. Առաքելեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Berliner Tageblatt» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հաւատացնում է, որ Մեկկայի երկաթուղու շինութեան համար ստորագրութեամբ ժողոված ահագին գումարները գործ են դրված բոլորովին ուրիշ նպատակների համար—նրանցով մասամբ հոգացված են պետութեան ընթացիկ ծախքերը եւ մասամբ վճարված են Անսալդիին, որի նաւարանում, Գենուայում, ութ զրահակիր են շինվում եւ վերանորոգվում Թիւրքիայի համար։ Թղթակիցը նախատեսում է, որ այդ հանգամանքը կարող է շատ վատ հետեւանքներ ունենալ. նախ՝ այդ ծախսված գումարները երբէք չեն կարող լրացվել, եթէ ուշադրութեան առնվի Թիւրքիայի ներկայ ֆինանսական դրութիւնը եւ երկրորդ՝ եթէ գաղտնիքը բացվի, պետութեան խաղաղութիւնը կարող է շատ հեշտութեամբ վտանգվել։—«National Zeitung»-ի ասելով՝ սուլթանի յօթելեանից յետոյ՝ մայրաքաղաքի մահմեդականների մէջ սկսվեց խիստ թշնամական վերաբերմունք նկատվել դէպի քրիստոնեաները։ Թէպէտ համարեա բոլոր քրիստոնեաները եւրոպական գլխարկը փոխարինել են ֆէսով, այսու ամենայնիւ թիւրքերը շատ հեշտութեամբ ճանաչում են քրիստոնեաներին եւ կանգնեցնելով փողոցներում՝ սպառնալիքներ են թափում նրանց վրա։ Սուլթանի հրամանով՝ Պերայում, որտեղ ապրում են օտար պետութիւնների դեսպանները, գիշերապահ զինուորների թիւը աւելցրած է։ Բացի դրանից կազմակերպվում է ժանդարմների մի նոր խումբ, որպէս զի կարգ պահպանէ մայրաքաղաքում։—Լրագիրներում յաճախակի երեւում են պաշտօնական տեղեկութիւններ, որ այս կամ այն աստիճանաւորը ուղարկվում է կառավարութեան կողմից դէպի Անատոլիա՝ նրա զանազան կէտերում ծագող «նոր անցքերը» քննելու համար։ Ընթերցողները, ի հարկէ, հասկանում են, որ այնտեղ մի ինչ որ վատ բան է կատարվում։ Սուլթանի յօթելեանի առիթով տեղի ունեցած հանդէսները եւ թիւրքական մամուլի մոլեռանդ քարոզները գրգռեցին մահմեդականների ֆանատիկոսութիւնը։ Չինական անցքերի առիթով՝ մամուլի մէջ երեւան եկած նշանաբանը—«Ասիան ասիացիների համար»—բացատրվում է հոգեւորականութեան կողմից այն մտքով, թէ իսլամը պէտք է ընդհանուր պատերազմ յայտնէ քրիստոնեաներին եւ ջնջէ նրանց մահմեդական պետութիւնների մէջ։ Բայեանների դրութիւնը Թիւրքիայի մէջ յուսահատական է դառնում. ամենքը բռնված են նոր կոտորածի սարսափով։

—Սերբական «Србобран» լրագիրը հաղորդում է, թէ վերաստուգող յանձնաժողովը ներկայացրեց, որ Միլանը վերջին ժամանակ 10 միլիոն ֆրանկ է վատնել Սերբիայի պետական գանձարանից. բացի սրանից նախկին մինիստրութեան համարեա բոլոր անդամները նշանաւոր գումարներ են յափշտակել։ Ֆինանսների մինիստր Վուկաշին Պետրովիչ, Վիեննայում մեռած իր բժիշկ-ուսանող որդու թաղման համար, 15,000 ֆրանկ է վերցրել գանձարանից, առանց վերադարձնելու։ Ներքին գործերի մինիստր Գէօրգի Գենչիչ սեփականացրել է 50,000 ֆ., Ա. Զօրջեվիչ, ժողովրդական լուսաւորութեան մինիստրը—5,000 ֆ., իսկ մինիստր-նախագահ Վլադան Զօրջեվիչ—ահագին գումարներ, որոնց քանակութիւնը դեռ ես ճիշտ որոշված չէ։ Մեծ զեղծումներ բացված են զինուորական մինիստրութեան մէջ։—«Застава» լրագիրը հետեւեալ հեռագիրն է ստացել Բէլգրադի իր թղթակցից. «Նատալիա թագուհին չէ դադարում բաց նամակներ գրելուց իր բարեկամներին եւ բարեկամուհիներին։ Շատ տիկիններ վերադարձնում են նրան նամակները եւ պատառոտում են նրա պատկերները։ Միլանի բոլոր իրեղէնները ուղարկված են Վիեննա, թէեւ նա այդ չէր պահանջել։ Այստեղի լրագիրները տեղեկութիւններ ստացան, թէ Ալէքսանդր թագաւորը կարել է բոլորովին իր յարաբերութիւնները ծնողների հետ։ Հաղորդում են, թէ Ալէքսանդր թագաւորը ասել է. «Դժբաղդաբար, իմ ծնողներս այժմ իմ թշնամիներից ամենավատթարներն են»։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

15 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Սեպտեմբերի 11-ին գեներալ Բենենկամպֆ երկու հարիւր զինուորներով հասաւ Գիրին եւ քաղաքը յայտարարեց գրաւված։ Նա իջեւանեց ցզեան-ցզիւնի պալատում։ Գիրինում ապահովութիւն է տիրում. զինուորները առանց զէնքի են շրջում։ Գեներալ Այգուստով հրամայեց Կրիժանովսկու հեծեալ զօրաբաժնին շտապել դէպի Գիրին։

ՊԵԿԻՆ։ Այն չինացին, որին մեղադրում են գերմանական դեսպանի սպանման մէջ, երէկ հարց ու փորձի ենթարկվեց զինուորական դատարանում։ Որովհետեւ նոր ապացոյցներ չեն գտնված, ուստի վճռահատութիւնը յետաձգված է այն յուսով, որ նոր նիւթեր կը հաւաքվեն սպանութեան իսկական յանցաւորի վերաբերմամբ։

Եապօնական գեներալ Ֆուկուշիմա վերադարձաւ Տակուից Պեկին։

Պոլիտեխնիքական գործերի դիրեկտոր Ուչիդա վերադարձաւ այստեղ եւ բերեց իր հետ հեռագիրներ Տօկիօյից։

Գերմանական դեսպանատունը մնում է այստեղ սպասելու, թէ ինչ կերպարանք կը ստանան հանգամանքները. նա սպասում է մի եւ նոյն ժամանակ հրահանգների։

Լի-Խունգ-Զանգին սպասում են այստեղ մի շաբաթից յետոյ։

Բոլոր օտարերկրեայ դեսպանատները դիմեցին իշխան Ցինին յայտագրերով, որոնց մէջ խորհուրդ են տալիս արքունիքին վերադառնալ Պեկին։ Յայտագրերը պաշտօնական չեն եւ գրված են դեսպաններից, ոչ որպէս պետութիւնների պաշտօնական ներկայացուցիչներից։ Յայտագրերի հեղինակները իրանց պետութիւնները կապված չեն համարում դրանով։ Դիպլոմատները գործում էին միասին, բայց յայտագրերը ուղարկեցին առանձին առանձին։ Յայտագրերի մէջ ոչ մի խոստումն չը կայ. ամեն ինչ սահմանափակվում է արքունիքին տուած խորհուրդով վերադառնալու Պեկին։ Ցին յանձն առաւ հասցնել նամակները կայսրին։ Այդ քայլի հետեւանքների մասին լոկ ենթադրութիւններ միայն կարելի է անել, որովհետեւ պրինց Տուանի եւ Տունֆուձեանի ազդեցութիւնը կարող է հեռու պահել արքունիքը Պեկինից։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Արտաքին գործերի մինիստրութիւնը աշխատում է արգելք դառնալ Չինաստանի բաժանմանը, միւս կողմից ներկայ հանգամանքներում անխուսափելի է համարում պահանջել պետութիւններից, որոնք Չինաստանում երկիրներ ձեռք կը բերեն, որ երաշխաւորութիւն տան, թէ այսուհետեւ եւս ամերիկական առեւտրական շահերը պահպանված կը լինեն այնտեղ։

ԼՕՆԴՕՆ։ Ինչպէս հեռագրում է Բօքէրտս Պրեսօրիայից, անգլիացիները նորից գրաւեցին Հէյլբրօն, Լինդելի եւ Բէյց։ Բօէրների մի զօրաբաժին յարձակումն գործեց Պիննարօ կայարանի վրա, բայց յետ մղվեց։

ՊՍԿՕՎ։ Ցուցահանդէսի առիթով բացվում է նահանգի գիւղատնտեսների համագումար ժողով, որի ծրագրի մէջ մտնում են տնտեսութեան վերաբերեալ բոլոր ճիւղերը։ Ժողովը կը փակվի սեպտեմբերի 20-ին։

ԼՕՆԴՕՆ։ «Արէյտէրի գործակալութիւնը» լսել է, թէ Նիւ-Եորկում հրատարակված հեռագիրը, որը պարունակում էր իր մէջ Սոլիսբիւրիի պատասխանը գերմանական շրջաբերական-յայտագրին, կեղծ է։ Անգլիան չէ կարող պատասխան տալ, մինչեւ որ չը ստացվեն Պեկինից անգլիական դեսպանատան նոր հաղորդագրութիւնները։

16 սեպտեմբերի

ՊԵԱՏԻԳՕՐՍԿ։ Բժշկական սեզօնը այսօր փակվեց։

ՍՕՖԻԱ։ Պարսից Շահը ժամանեց այստեղ. նրան դիմաւորեցին իշխան Ֆերդինանդ, մինիստրները եւ դիպլոմատիական մարմինը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Ֆիլիպպեան կղզիներում գտնվող ամերիկական զօրքերի գլխաւոր հրամանատարը հաղորդում է, թէ կապիտան Շիլդս եւ 51 զինուորներ, որոնք ուղեւորվելով Սանտա-Կրուցից գնում էին Տօրրիօս, անյայտ կորել են։ Ենթադրում են, որ նրանք գերի են ընկել Ֆիլիպպեցիների ձեռքը։

ԻՕԿՕՀԱՄԱ։ Եապոնայի մինիստրութիւնը հրաժարական տուեց. նոր մինիստրութիւն կը կազմէ, երեւի, մարկիզ Իտօ։

ՍՕՖԻԱ։ Պարսից Շահը մեկնեց դէպի Կ. Պոլիս։

ՏԵԱՆՁԻՆ։ Սուրհանդակը լուր բերեց, թէ չվէդական քարոզիչները սպանված են Շանսիում։

ՇԱՆԳՀԱԻ։ Չինական հաւաստի աղբիւրից հաղորդում են, թէ հարաւային նահանգների փոխարքաները, որոնք բարեկամ են օտարերկրացիներին, մի յիշատակագրով Տուանի, Կանի եւ Տունֆուձեանի դէմ՝ ծանր մեղադրանքներ են յարուցանում։ Տունֆուձեան դեռ եւս չինական բոլոր զօրքերի հրամանատար է։ Եթէ Ամերիկայի բողոքը՝ Տուանին պետական խորհրդի նախագահ նշանակելու դէմ՝ անուշադիր մնայ, այն ժամանակ Ամերիկան կը հրաժարվի բանակցութիւններից, բացի այն դէպքից, եթէ երաշխաւորութիւն տրվի, որ խաղաղութեան բանակցութիւնների վիճակները չեն ենթարկվի կայսրի ցենզուրային։

Նանկինից ստացված մանաւոր տեղեկութիւններին նայելով՝ հարաւային փոխարքաները սպասում են, որ Գերմանիան եւ Անգլիան պատերազմ կը յայտնեն, ուստի եւ Չինաստանը չի յանձնի պետութիւններին անկարգութիւնների մեղաւորներին։ Զօրքերը եւ պաշարեղէնը ուղարկվում են Տաուէնֆու։

17 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գիրս դեսպանի հեռագիրը. «Բարձրագոյն հրամանի համաձայն, շաբաթ օրը դուրս եմ գալիս դեսպանատան բոլոր անդամների հետ դէպի Տեանձին»։

«Правительственный Вѣстникъ» հաղորդում է, թէ հաւատացնում են, որ այսօր Տայիէնֆուում կը ստացվի չինական կայսրի հրամանը բռունցքամարտների պարագլուխներին հեռացնելու եւ ատիճանազուրկ անելու վերաբերմամբ. այդ պատիժներին պէտք է ենթարկվեն Տուան, Զժուան եւ Լան իշխանները, Կանի կանցլերը եւ Ինաեանան ոստիկանապետը։

ԼՕՆԴՕՆ։ Մինիստր Զէմբէրլէն ընտրված է նորից. Բիրմինհամում ուրիշ ոչ ոք չէր դրել իր թեկնածութիւնը։

ԲԵՐԼԻՆ։ Վիլհելմ կայսրը շնորհեց ռուս գեներալ Ստէսսէլին Կարմիր Խաչի չքանշանի 2-րդ ատիճանը։

ԲԱԳՈՒ։ Սեպտեմբերի 15-ին, ժամի 4-ին ճաշից յետոյ, Սաբունչու նաւթահորերում ահագին հրդեհ բռնկեց, որից վնասվեցին «Արշալոյս», Նաղիեվի, Նոբէլի, Թումայեանի, «Радуга» Բագուի նաւթարդիւնաբերական ընկերութեան եւ «Россія» ընկերութեան նաւթահորերը։ Այրվեցին 97 նաւթահորեր, տներ, 10 հատ երկաթեայ նաւթամբարներ, մինչեւ 500,000 պ. նաւթ եւ մեքենաներ։ Հրդեհը շարունակվում է։ Վնասը ահագին է։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Ամերիկական հիւպատոսը հաղորդում է Շանգհայից արտաքին գործերի մինիստրութեանը, թէ Շէն ցոյց տուեց նրան կայսրի եւ այրի կայսրուհու հրովարտակը, տուած Տաէնֆուում, որի մէջ յանդիմանութիւն է յայտնված չինական մինիստրներին նրա համար, որ նրանք խրախուսում էին «Մեծ բռունցքի» շարժումը։ Հրովարտակով ապա հրամայվում է զրկել բոլոր ատիճաններից չորս պրինցներին, իսկ պրինց Տուանին զրկել նաեւ այն արտօնութիւններից եւ ծառաներից, որ ունէր նա համաձայն իր գիրքի, նոյնպէս եւ յանձնել Տուանին առանձին դատարանի կայսերական ընտանիքի անդամների համար։

ՀՕՆԿՕՆԳ։ Անգլիական «Լունկիանգ» շոգենաւը, որ երթեւեկութիւն էր կատարում Կանտոնի եւ Վուչժօուի մէջ, բռնվեց չինացիների կողմից, որոնք արձակեցին նրա վրա հինգ ռուպի։ Շոգենաւի մեքենապետը վիրաւորված է։ Անգլիական հիւպատոսը, որին տեղեկութիւն տուին այդ մասին, հրամանագրեց «Լունկիանգին» չանցնել Լուկալոյի ջրանցքով։

ՇԱՆԳՀԱԻ, Հրատարակված է կայսերական հրովարտակ, որի մէջ չնորհակալութիւն է յայտնված ռուսաց Կայսրին՝ ռուսաց զօրքը Պեկինից հեռացնելու համար։

18 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Նոցա Կայսերական Մեծութիւնները սեպտեմբերի 17-ին մեկնեցին Սեւաստօպոլ։

Արտաահմանեան մամուլի մէջ վերջին ժամանակ երեւացին տեղեկութիւններ, որ իբր թէ Ռուսաստանին սահմանակից մանջուրական շրջանները միացված են ռուսաց պետութեան երկիրներին։ Այն խնդիրները, որոնց հետաքրքիր է լինում Կայսերական կառավարութիւնը Հեռաւոր Արեւելքում, որոշակի ցոյց են տուած հրատարակված պաշտօնական հաղորդագրութիւններում եւ նրանց բովանդակութիւնից բաւականաչափ պարզութեամբ երեւում է, որ

վերեւ յիշված տեղեկութիւնները՝ Մանջուրիան Ռուսաստանին միացնելու վերաբերմամբ՝ անհիմն են։

ՇԱՆԳՀԱՅ։ Չինական կայսրը պատրաստականութիւն յայտնեց հանդիսաւոր կերպով յարգանք մատուցանել Կէտտէլէրի գերեզմանին։ Կայսերական արքունիքը հրաման տուեց պատրաստել պալատը Սիանանֆուում, որ Շանսիի գլխաւոր քաղաքն է, որպէս զի արքունիքը անմիջապէս տեղափոխվի այնտեղ։

ՏԵԱՆՋԻՆ։ Վալդերզէէ եկաւ այստեղ կէսօրից յետոյ։ Կայարանում կանգնած էր պատուաւոր պահակ բոլոր դաշնակիցների զօրքերից։ Կայարանը զարդարված էր գերմանական, ռուսական եւ ֆրանսիական դրօշակներով. աչքի էր ընկնում անգլիական եւ ուրիշ դաշնակիցների դրօշակների բացակայութիւնը։

ՇԱՆԳՀԱՅ։ Հրատարակված է հրովարտակ Տայէնֆուում սեպտեմբերի 12-ին, որի մէջ ասված է հետեւեալը. «Կայսերական գահը անմեղ է ներկայ դրութեան մէջ, եւ այդ դրութիւնը առաջ է եկել աւելի նրանից, որ պրինցները եւ բարձր աստիճանաւորները խրախուսում էին «Մեծ-բոունցքի» չարժումը, ուստի եւ նրանք կենթարկվեն պատժի»։

Առաջ անուանված են առաջնակարգ պրինցներ Զուանտայխէն եւ Տաօցին, որոնք զրկվում են իրանց աստիճանից եւ պաշտօններից։ Երկրորդ կարգի պրինց Տուան պէտք է զրկվի բոլոր պաշտօններից եւ ռոճկից եւ յանձնվի պալատական դատաստանին։ Ապա խիստ պատժի կենթարկվեն երկրորդ կարգի հերցոգ Ցայլան եւ ցենզուրական վարչութեան փոխ-նախագահ Ինմիա։ Մեծ քարտուղարի օգնական եւ արդարադատութեան մինիստրութեան նախագահ Զժաօյուշհաօին, որպէս նախազգուշութիւն, պէտք յանդիմանութիւն անվի։

ՏԱԿՈՒ։ Ծովապետների խորհրդում որոշված է, որ մի քանի ազգեր գործակցեն Ռուսաստանին դէպի Շանխայգուան ձեռնարկված գործողութիւնների մէջ։ Վուարօն այդ նպատակի համար ուղարկում է մի բատալիոն։ Վուարօն հետախուզիչ զօրաբաժին ուղարկեց դէպի Պաօտինֆու։

Կ. ՊՕԼԻՍ։ Պարսից Շահը հասաւ այստեղ «Իզէդդին» կայսերական զբօսանաւով։

ՏԱԿՈՒ։ Հաւատացնում են, թէ գերմանացիները պատրաստվում են գրաւել Պաօտինֆու։ Ռուսները չարունակում են առաջանալ դէպի Պէյտան եւ Լուտայ՝ Շանգհայգուանի մարտկոցները գրաւելու համար։ Լի-Խունգ-Զանգ մտադրվում է շուտով ճանապարհ ընկնել դէպի Պեկին։

ԻՕԿՕՀԱՄԱ։ Մարկիզ Իտօ ստացաւ կայսրից նոր մինիստրութիւն կազմելու յանձնարարութիւն։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Ի. Ֆ. Պրօտասեվիչ—12—1 ժ. ականջի, քթի, կոկոր դի եւ կրծքի հ.

Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Ֆ. Պրօտասեվիչ—5—6 ժ.

Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), վեներ. և մորթի հ.

Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ֆ. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Կարա-Մուրզայի

խմբական ժուր-ֆիքսն (նշանակ. օրը) է ամենայն չորեքշաբթի, երեկոյեան 6—9 ժամին ընդունվում են նոր ձայներ։ 1—3

Յայտնում ենք ի գիտութիւն, որ Թէհրանի հայոց վարժարանի համար արդէն վարձված են ուսուցիչներ եւ ուսուցչուհի։ 1—1

ՀՐԱՒԷՐ

Այսօր 24-ին, կիրակի օրը, ճաշու ս. պատարագից յետոյ, 12 ժամին, Թիֆլիսի ա. եւ բ. մասի հայոց եկեղեցիների բարեպաշտ ծխականները հրաւիրվում են իրանց ծխական եկեղեցիները՝ ընտրելու երեք-երեք պատգամաւորներ, որոնք պէտք է ընտրեն Ներսիսեան հայոց հոգեւոր դպրանոցի համար հոգաբարձուներ։

Գործակալ { ա. մասի՝ Զաքարիա քահ. Զարդեղեան
բ. մասի՝ Գրիգոր քահ. Մանդակունի

(Ե. չ.) 1—2

ԲԺՇԿԱՊԵՏ ՎԱՀԱՆ ՍՐԹԱՐՈՒՆԻ

վերադառնալով արտասահմանից, վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը, առաւօտեան 9—11 ժամը, երեկոյեան 5—7-ը։ Սերգիեվսկայա փողոց, № 12, տ. Ծովիանովի։

2—5

Բժիշկ Գ. Մեհրաբեան

վերադառնալով Թիֆլիս, վերանորոգեց բերանի խոռոչի եւ ատամների հիւանդութիւնների բժշկութիւնը։ Ընդունելութիւնը առաւօտեան 10—2 ժ. եւ երեկ. 5—7½ ժ. իր նոր բնակարանում, որ գտնվում է հին բնակարանին կից, Վելիամինեան փող. տ. Քարտաշեանի, № 4.
[Вельяминовская ул. № 4, домъ Карташянъ].

11—25

Սայլապան Շահնազարեանց, որ հազիւհազ կարողանում էր մի կերպ ապրեցնել իր բազմանդամ ընտանիքը (վեց փոքրիկներ) վերջին ժամանակ սալը շուռ գալով՝ տակն է ընկել եւ կոտրել ոտը. մնացել է թէ ինքը, թէ կինը հիւանդ՝ անկողիններում եւ փոքրիկները ամենաթչուառ, անօգնական դրութեան մէջ։ Լալագին խնդրում է բարեխիղճ մարդկանցից թէ նիւթական եւ թէ բժշկական օգնութիւն։

Հասցէն։ Харпухск. ул., д. Гулазова, № 306.

3—5

КАПИЛЛЕРИНЪ
НОВОЕ
СОВЕРШЕННО
БЕЗВРЕДНОЕ
СРЕДСТВО
ВОЗВРАЩАЕТЪ СѢДЫМЪ
ВОЛОСАМЪ
ИХЪ ПРЕЖНІЙ ЦВѢТЪ
ЦѢНА 2 РУБ.
А. СІУ и К°
М 109.538

Ատամների եւ բերանի խոռոչի հիւանդութիւնների

ԲԺԻՇԿ ՆԻԿ. ԿԱՃԿԱՃԵԱՆ

ընդունում է հիւանդներ առաւ. 10—2 ժ. եւ երեկ, 5—7 ժ.։ Երեւանեան հրապարակ. տ. Խաչատրեանի. Роиновъ-ի լուսանկարչական գործարանի տակը։ Эриванская площадь, домъ Харазова. (Ե. հ. չ. 11—25

Въ непродолжительномъ времени поступятъ въ продажу новыя книги, соч. И. Я. Бронъфонъ-Бреннеръ

1] Курсъ коммерческой ариѳметики, 2-е изданіе.

2] Самоучитель двойной бухгалтеріи и

3] Руководство по составленію отчетовъ.

Въ виду большихъ требованій и ограниченнаго количества экземпляровъ, принимается заранѣе, до выхода, подписка у автора. Тифлисъ. Михайловская, 71.

12—20

ՕՐԻՈՐԴ ԳՕՌԱՆ

Դաշնամուրի, գաղիերէնի, անգլիերէնի եւ հայերէնի

Դասախօսութիւնները չարունակելու է սեպտեմբերի 15-ից։ Դիմել պարոն Եփրեմ Ծատուրեանցի խանութը, Դվօրցօվայա փողոցի վրա։

(չ. չ.) 4—5

Քաղաքային պրոֆէսիոնալ արհեստանոցի ուսուցչուհին բաց է անում

Կար ու ձեւի

երեկոյեան դասընթացքներ, ամենաչափաւոր դներով։ Ժամը 4—6։

Մեժեվայեա փող (Լաբօրատորնայեա), տուն Տ. Դաշկեվիչի, № 72, բնակարան Եվանգուլօվներ։ Նոյն տեղում պարապում են երեխաների հետ կրկնողութեամբ։ (չ. ե. հ.) 2—3

Թիֆլիսի քաղաքային կրեդիտային ընկերութեան վարչութիւնը

սրանով յայտնում է ընկերութեան անդամներին, որ կանոնադրութեան 71 յօդուածով առաջ եռամսեայ արտօնութեան ժամանակամիջոցը՝ վճարները ընկերութեան գանձարանը մտցնելու համար՝ լրանում է այս տարվայ հոկտեմբերի 1-ին եւ որ մինչեւ հոկտեմբերի 10-ը ապառիկները չը վճարելու դէպքում, անձնական վճարողների կալուածքները, կանոնադրութեան 72-րորդ յօդուածի համաձայն, հրապարակապէս կը յայտնվեն, որպէս ծախվող կալուածքներ։

1—2

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մանելով Տրապիզօն, Սամսօն եւ Պօլիս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 27 սեպտեմբերի (10 հոկտեմբերի) ՄԻՆԳՐԵԼԻ չոգենաւը, նաւապետ ՇԻԼԹ։ Եւ այսպէս չարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվ, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիոնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մութաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՈՍՍԻՑՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն։ (Ե. հ. չ. 14 20

Ֆինանսների մինիստրի թոյլտուութեամբ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողներն ստանում են ատեստատներ։ Կուրսերում ուսանվում են՝ 1) Առեւտրական թուաբանութիւն եւ թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական տնտեսագիտութիւն. 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն եւ արագագրութիւն (ուղղումն ձեռագրի)։

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ Եղբ. Ծովիանեան եւ ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում։ Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) եւ մանրամասն ծրագիրը—տրվում եւ ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. (Ե. չ.) 22—25

Սարգիս Վ. Աբրահամեան

Հասցէ. Սօլօլակ, Դանօվսկայա փող. տ. Թամամշեվի, № 26, բն. № 9.

Մոլորեցնում եւ պատրաստում է երկու սեռի անձանց չորս ամսվայ ընթացքում, երաշխաւորութեամբ եւ հարկաւոր դէպքում—յանձնարարականներ տալով պարապմունքներ գտնելու համար

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ

1) Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ճիւղերով.
2) Առեւտրական թուաբանութիւն.
) Առեւտրական թղթակցութիւն։
4) Գեղագրութիւն, ուսումնասիրութիւն զանազանատեսակ շրիֆտների եւ ուղղումն ամենավատ ձեռքերի։

Կարելի է տեսնել առաւօտեան ժամի 9-ից մինչեւ 11-ը եւ 4-ից մինչեւ 7-ը երեկոյեան։ (չ. ո. չ.) 4—14

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Ա. ՏԷՐ-ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

ՈՒՆԻ ՀԻՆԳ ԴԱՍԱՐԱՆ, ՈՐՈՆՔ ՈՒՍՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ԵՆ ԳԻՄՆԱԶԻԱՅԻ ԵՒ ՐԷԱԼԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՀԻՆԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻՆ։

Ընդունում է եւ պատրաստում աշակերտներ գիմնազիայի, բէալական ուսումնարանի, կադետների կորպուսի մինչեւ հինգերորդ դասարան, նոյնպէս առեւտրական, երկրաչափական եւ այլ ուսումնարանների համար։

Առաջին բաժանմունքում երեխաներ ընդունվում են առանց քննութեան։

Ուսումնարանում ուսուցանում են բարձրագոյն ուսում ստացած հմուտ մասնագէտ մանկավարժներ։

Հասցէն՝ Թիֆլիս, Գանօվսկայա, № 11 (երրորդ գիմնազիայի մօտ)։ 5—5

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Լերմօնտօվսկայա փողոց, № 9)

Ցանկացողները ունենալ իրանց առեւտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ եւ աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առեւտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, եւ ունեն օրինաւոր ատտեստատներ։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի

Կուրսերի ծրագիրը եւ կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում եւ կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են՝ ТИФЛИСЪ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу. (Ե) 11—12

Дозволено цензурою, Тифлисъ. 18 Сентября 1900 г.

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.